երգեցիկ խումբը տեղաւորուած էր Հանդիսարանում՝ որպէս զի Արքայի մնոնելուն պէս՝ երգէ Նորա անուան նուիրած երգը։ Բայց Ն. Մեծութիւնը հաճեց շարունակել իւր ճանապարհը յայտնելով՝ թէ վերեւ չի բարձրանայ։ Այստեղից միաբանութիւնը եւ բարձրաստիճան եպիսկոպոսները մեծ Հիւրին ճեմարանի հիւսիսային դարբասն առաջնորդեցին՝ որտեղից կառք նստաւ եւ Երեւան գնաց։

Մուզաֆֆէր-Էդ-դին Շահը Հոգեւոր Տիրոջ տուած այցելութեամբ մի անգամ էլ կամեցաւ անձամբ ցոյց տալ՝ թէ որքան շնորհ ունի ղէպի իւր հպատակ հաւատարիմ Հայ ժողովուրդը՝ որ մի եւ նոյն ժամանակ մեր Հոգեւոր Պետի հօտի մի մասն է։ Ն. Մեծութեան հնգամեայ թագաւորութեան ժամանակ պարսկահպատակ Հայ ժողովուրդն արդէն բազմիցս առիթ էր ունեցել վայելելու իւր Վեհապետի առանձին խնամքն ու պաշտպանութիւնը՝ որ այստեղ մի առ մի թուելն աւելորդ ենք համարում։ Այս այցելութիւնը մի բարձր առհաւատչեայ էր՝ թէ Ն. Բարձրութիւնն Իւր հայրական եւ արքայական խնամքը այսուհետեւ եւս պիտի տարածէ միւս հպատակների հետ եւ Հայ ժողովրդի վերայ։ Ուստի եւ բնական էր Հոգեւոր Տիրոջ ի սրտէ ուրախութիւնը եւ միաբանական ուխտի երախտագիտական զգացմունքը Իրանի Մեծ Շահի Մայր Աթոռ ժամանելու առթիւ։

Աստուծոյ կարողութեամբ կեցցէ՛ շատ երկար տարիներ Մուզաֆֆէր-Էդ-դին Շահն շահն Իրանի։

Գ. Վ. Ցովսէփեան.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հոկտ. 1ին մեծ շքեղութեամբ տօնուեցաւ Ս. Հայրապետի աթոռակալութեան եօթներորդ տարեդարձը։ Ցօնի պատճառով բազմաթիւ հիւրեր էին եկել Երեւանից Ն. Սրբութեան աջը համբուրելու։ Պատարագից յետոյ խուռն բազմութեան ներկայութեամբ հայրապետական մաղթանք կատարուեց Մայր Տաճարում Իջման սեղանի առաջ։ Մաղթանքից յետոյ բաղդ ունեցան Ն. Սրբութեան աջը համբուրելու միաբանութիւնը՝ ճեմարանի ուսուցչական խումբը աշակերտների հետ եւ բազմաթիւ անձինք աշխարհական դասից։ Պաշտօնական անձինք բաղդ ունեցան Ս. Հայրապետի աթոռակալութեան տարեդարձը շնորհաւորել վեհարանում։ Ճաշին սեղանատունը լի էր ծայրէ ի ծայր։ Հոգեւոր Տէրը հաճել էր սեղանատուն իջնել։ Ճաշի սկզբում Ծերունի Հայրապետը մի քանի սրտառուչ խօսքեր արտասանեց ակնարկելով իւր Ծերութիւնը։ Եղեկէլի օրինակով հասկացրեց՝ որ Աստծու կամքն է երկարացնել իւր կենաց օրերը։ Ապա օրհնեց բոլոր հանդիսականներին եւ վեհարան առանձնացաւ հանգստանալու։ Բազմութիւնը միաբանութեան հետ ուրքի կանգնած ակնածութեամբ եւ խորին լռութեամբ լսում էր Ս. Հայրապետի իմաստալից եւ սրտաշարժ խօսքերը։ Ս. Հայրապետի հեռանալուց յետոյ միաբանութեանս աւագագոյն անդամ եւ Երնջակու վանահայր Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսը՝ որ մի քանի շաբաթից ի վեր հիւր է այստեղ՝ առաջարկեց Ն. Սրբութեան կենացը։ Սեղանակիցները կեցցէներով ընդունեցին Գերապատիւ Հօր առաջարկութիւնը՝ որին հետեւեց Հ. Կոմիտաս վարդապետի ղեկաւարութեամբ «Տէր՝ կեցո զու զՀայս» խմբական՝ քառաձայն երգը։ Մայր Աթոռի հաստատութեան բաժակ առաջարկեց Երեւանի թեմական փոխանորդ Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսն՝ որ թեմական դպրանոցի նորահաստատ տեսուչ պ. Տատեանի եւ երկու ուսուցիչների ուղեկցութեամբ եկել էր Մայր Աթոռ Ն. Սրբութեան տարեդարձը շնորհաւորելու։ Գերապատիւ Արքեպիսկոպոսը հակիրճ խօսքերով շեշտեց Մայր Աթոռի համազգային նշանակութիւնը եւ ամբողջ միաբանութիւնն ուրքի կանգնած երգեց «Էջմիածին ի Հօրէ» շարականը։ Ի վերջոյ Սինոդի նախագահ Գերապատիւ Արիստակէս Արքեպիսկոպոսի հրամանով խօսեց Տ. Գարեգին վարդ. Ցովսէփեան՝ մատնանիշ

անելով Արրաղնադոյն Հայրապետի կեանքից որոշ գծեր՝ որպէս հոգևոր վերածնութեան ուղիղ ճանապարհ և առաջարկեց Հայ ժողովրդի սեղանակից ներկայացուցիչների կենացը։

Երևկոյեան ճրագալոյց էր վանքի բակում և բազմաթիւ ժողովուրդ Երևանից և Վաղարշապատից՝ հեռաւոր կողմերից եկած ուխտաւորների հետ զուարճանում էր լուսավորութեամբ և ձեմարանի աշակերտների երգերով։

Սեպտ. 20-ին Հոգևոր Տէրը մի փոքրիկ ճանապարհորդութիւն կատարեց ուղեկցութեամբ Տ. Պետրոս վարդապետի Այվազեանց և շնորհ. Հմայեակ սարկաւագի։ Ս. Հայրապետն այցելեց Սեան և Հաղարծին վանքերը և ապա սեպտ. 27-ին Մայր Աթոռ դարձաւ։

Հոգևոր Տիրոջ բարձր հրամանի համեմատ՝ Գերապ. Տ. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունի սեպտ. 24-ին սարկաւագ ձեռնադրեց Նիկողայոս Մելիք Թանգեանին, երուանդ Տ. Մինասեանին և Համբարձում Վարդապետեանին։ Առաջին երկուսը որպէս կուսակրօն եկեղեցականներ ընդունուեցան Մայր Աթոռի միաբանութեան մէջ, իսկ երրորդը՝ Արցախի թեմական դպրանոցն աւարտած՝ պատրաստւում է քահանայութեան։ Շնորհունակ կուսակրօն սարկաւագները ձեմարանաւարտ են. Նիկողայոս սարկաւագն լսարանական դասընթացն աւարտել է 1886 թ., երկար տարիներ ուսուցչութիւն է արել Արցախի թեմական և ուրիշ տեղերի ծխական դպրոցներում. իսկ 1897-ից՝ $3\frac{1}{2}$ տարի, որպէս ազատ ունկնդիր, լսել է Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական բաժնի դասախօսութիւնները։ Շնորհունակ Նիկողայոս սարկաւագն այժմ ձեռագիրների մատենադարանում եռանդով զբաղուած է Հայոց եկեղեցիաւունքի ուսումնասիրութեամբ։ Շնորհունակ երուանդ սարկաւագը ձեմարանական դասընթացքն յաջողութեամբ աւարտել է անցեալ ուսումնական տարուայ վերջում աւարտական մի շարադրութիւն ներկայացնելով «Հաղբատ և Սանահին վանքերը մեր պատմութեան մէջ» վերնագրով։ Ի սրտէ ուրախ ենք նոր միաբանակիցների ընդունելութեամբ։

— Սեպտ. 21-ին արտասահմանից վերադարձաւ Արժ. Տ. Յուրիկ վարդ. Զոհրաբեան, որ չորս տարուց ի վեր կատարելագործւում էր աստուածաբանական գիտութիւնների մէջ։ Արժ. Հայրը ձեմարանի դասատու և տեսչի օգնական է նշանակուած։

— Սեպտ. 29-ին հիւր էր Մայր Աթոռում Արժ. Տ. Բենիկ վարդապետ, Նուշուայ թեմական դպրանոցի նորահաստատ տեսուչը։

— Սեպտ. 30-ին Մայր Աթոռ եկաւ Մարցի կալուածների կառավարիչ Արժ. Տ. Թովմա վարդապետ և մի քանի օր մնալուց յետոյ կրկին իւր պաշտօնատեղին դարձաւ։

— Արժանապատիւ Տ. Խաչիկ Ծ. վարդ. Դաւեան պատասխանատու անձն է նշանակուած Մայր Աթոռի Տպարանի համար։

— Հոկտեմբերի 1—5 Մայր Աթոռում հիւր էր Տփխիսարնակ Տիկին Նաղիրեան։ Բարեպաշտ տիկինը. հոկտ. 2-ին պատարագ մատուցանել տուաւ ի յիշատակ իւր հանգուցեալ ամուսին բժշ. Ռոմանոս Նաղիրեանի, հոգալով միաբանութեան սեղանատան այդ օրուայ ճաշի ծախսերը։ Տիկին Նաղիրեանը՝ իւր ամբողջ կարողութիւնը՝ մօտ 450000 ր. կատակել է մանուանից յետոյ հանրօգուտ հաստատութիւնների, որոնց մէջ Մայր Աթոռն էլ իւր բաժինն ունի։ Յարգելի տիկինը մշտապէս է իւր կարողութիւնը կենդանութեան

ժամանակ շահեցնել յօդուտ նշանակուած հատատուութիւնների։

Հոկտ. 11-ին Մայր Աթոռում հիւր էր Ռուսաց Վանայ փոխ հիւպատոս Աղէքսանդր Դրիգորիեվիչ Տումանսկին իւր ընտանիքով։ Յարգելի պարոնը երեք օր հիւրասիրուելուց և Մայր Աթոռի հնութիւնները տեսնելուց յետոյ՝ անցաւ դէպի Վան՝ իւր պաշտօնատեղին։

Նորին Մեծութիւն Պարսից Արեգակնափայլ Շահի գալստեան առթիւ պատարաստութիւն տեսնելու համար Հոգևոր Տիրոջ հրամանով յանձնաժողովի անդամներ էին նշանակուած Արժ. Տեառք Ղևոնդ, Մխիթար, Տիրայր և Կորիւն վարդապետները։

Մեր միաբանակից Տ. Տիրայր վարդապետը խնայելով մեր տկարութեան և մեր գործը փոքր ինչ թեթևացնելու նպատակով, սիրայօժար կերպով ինքնաբերաբար յանձն էր առել կազմել «Արարատի» հոկտ. և նախընթաց համարի «օտար եկեղեցիների» բաժնի մեծ մասը։ Սրտանց շնորհակալութիւն ենք յայտնում ընկերական աջակցութեան համար և դէպքից օգտուելով՝ ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրում՝ այս հետաքրքրական բաժնի վերայ։

ՁԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ

Սեպտ. 30-ին սովորական շքով կատարուեցաւ Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի 26 ամեայ տարեդարձը։ Շիրակից և հեռաւոր կողմից եկած ուխտաւորների և Երևանից եկած հիւրերի բազմութիւնը կենդանութիւն էր տալիս հանդիսին։ Պատարագից յետոյ ամբողջ միաբանութիւնը գլուխ ունենալով Հոգևոր Տիրոջ՝ խմբուած էր երջանկայիշատակ հիմնադրի գերեզմանի շուրջը։ Հոգեհանգստից յետոյ Բ. լսարանի ուսանողներից երեք հոգի՝ Ս. Հայրապետից ուրաբ ստացան, որպէս նշան, թէ պատարաստուում են եկեղեցու սպասաւորութեան լուծն առնելու։ Այնուհետև միաբանութիւնը և ուխտաւորների բազմութիւնը դիմեցին Ճեմարանի հիւսիսային բակը։ Ճեմարանի ճակատը զարդարուած էր ճաշակով թարմ ծաղիկներով։ Միաբանութեան համար բազկաթոռներ էին շարուած կիսաբոլոր. իսկ մէջտեղը կարմիր մահուդով ծածկուած ամբիոնի վերայ զետեղած էր հայրապետական աթոռը։ Նորին Սրբութեան տկարութեան պատճառով հանդիսադիր էր նշանակուած Գերապ. Տ. Մեսրոպ Աքիեպիսկոպոս։ Ճեմարանի Արժ. Տեսուչը կարդաց իւր հրապարակային հաշուետուութիւնը, իսկ խումբը երգեց Հ. Կոմիտաս վարդապետի ղեկավարութեամբ պատշաճաւոր երգեր։

Երեկոյեան ըստ սովորականին գիտական—գրական երեկոյթ կար։ Բարձրագոյն դպրոցների սովորութեան համաձայն՝ Ճեմարանում ևս աւանդութիւն է դարձել տարեդարձի օրը գիտական մի շարադրութիւն կարդալ։ Այս անգամ՝ դասախօսը պ. Ս. Տիզբանեանցն էր, որ Հայոց նորագոյն եկեղեցական իրաւունքի մասին հետաքրքրական մի շարադրութիւն կարդաց։ Ուսանողներից Շահրազան նկարագրեց Հ. տեսչի առաջնորդութեամբ այս ամսում կատարած ճանապարհորդութեան ժամանակ հանդիպած հին երկաթագիր աւետարանները։ Գրական երեկոյթից յետոյ՝ ուսուցչական խումբը աշակերտների հետ ընտանեկան ընթրիք վայելեց, ուր պատշաճ ճառախօսութիւններ եղան կրթական գործի վերաբերութեամբ։

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Գարագեօզեան կտակին այն տրամադրութիւնը, որով որբանոց մը պիտի կառուցուէր, այս պահուս նորէն կը զբաղեցնէ Պատրիարքարանը։ Կը լսենք